ՀՏԴ 913.1 (479.243) Պատմություն

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԸ (ԳԱՐԴՄԱՆՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ)՝ ԱՐՑԱԽ «ԱՇԽԱՐՀԻ» ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ Է

Նունե ՍԱՐՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր. *Արցախ, Ուտիք, Գարդմանք, էթնիկ տարածք, մելիքություն, Գյուլիստան, բռնագաղթ, Քուստ-ի-Փառնես, Կողթ, Մեծ Կողմանք, Տուս-Քուստակ, Շակաշեն, Ելիզավետպոլի նահանգ, պայմանագիր, տեղաշարժ, ազատագրական պայքար, զանգվածային բնաջնջում, Շահումյան:*

Ключевые слова:*Арцах, Гардманк, Утик, Шаумян, этническая территория, меликства, Гюлистан, выселение, Куст-и-парнес, Кохт, Тус-Кустак, Метс-Кохманк, Шакашен, Елизаветполская губерния, договор, делегация, переселение, освободительная борьба, массовое уничтожение.*

Key words: *Artsakh, Gardmank, Utig, ethnic area, melikdom, Gulistan, eviction, Kust-i-Parnes, Koght, Mets Kogmank, Tus-Kustak, Shakashen, The province of Elizavetpol, agreement, upheaval, liberation struggle, massive genocide, Shahumyan.*

Н.Сарумян

Северный Арцах - историко-географическая часть Арцахского «мира»

Северный Арцах - исконно армянская земля и неотъемлемая часть Арцаха и частично - Утика. В статье представлена историческая география Арцаха и Утика, частью которых является Северный Арцах, а также рассматривается процесс дальнейших политико-географических изменений в истории региона. Особое внимание уделяется периоду насильственного введения данной территории в состав Азербайджанской ССР. Отмечается, что на всем протяжении существования СССР главной целью руководства Азербайджана было стремление очистить исконно армянские земли от коренных жителей и создать тюркское государство.

Однако, несмотря на всяческие угрозы и попытки вытеснения армянского населения, армяне Северного Арцаха смогли отстоять свою свободу и целостность территории вплоть до 1991 года.

N.Sarumyan

North Artsakh is the Historical Geographical Area of the Artsakh ''World''

The idea that North Artsakh is an inseparable part of the historical Artsahk ''World'' is illustrated in the article. Accordingly the history of the administrative unit and the political borders of Artsakh and its Northern part are presented. The process of further political and geographical changes in the history of the region is considered as well. Then the political pressure on many regions of historical Armenia, such as Nakhichevan, Nagorno and North Artsakh in ''Fraternal Azerbaijan'' and one part of Javakheti and Gugark in Georgia with adopted program of Stalin's authorities in the conditions of Soviet regime is presented.

It is noted that throughout the existence of the USSR, the aspiration to clear the Armenian lands of aboriginals and to create the Turkic state was a main goal of the leadership of Azerbaijan.

However, despite all threats and attempts of replacement of the Armenian population, Northern Artsakh's Armenians could defend the freedom and integrity of the territory up to 1991.

Հոդվածում լուսաբանվում է այն միտքը, որ Հյուսիսային Արցախը պատմական Արցախ «աշխարհի» անբաժանելի մաս է հանդիսանում: Ըստ այդմ էլ ներկայացվում է Արցախի և նրա Հյուսիսային մասի վարչաքաղաքական սահմանները, վարչական միավորի պատմական անցյալը, լուսաբանվում է ուսումնասիրվող տարածքների միասնական էթնիկ և տնտեսական տարածք հանդիսանալու հանգամանքը:

Ներկայումս Հյուսիսային Արցախի և նրա մի մասը կազմող Շահումյանի տարածքը բռնազավթված է Ադրբեջանի կողմից, իսկ շահումյանցիները՝ զրկված են իրենց հայրենի օջախներից:

Արցախը զբաղեցնում է Փոքր Կովկասի հարավ-արևելյան լեռնոտ տարածքը, Մեծ Հայքի ծայր արևելյան հատվածի մի մասը: Նրա սահմաններն արևմուտքում հասնում են Սյունյաց աշխարհին՝մինչև Սևանա լճի արևելյան ափերը,հյուսիս-արևելքում՝ Ուտիքին, հարավում՝ Երասխ(Արաքս) գետին, արևելքում՝ խորանում Մուխանքի դաշտաբերանին, իսկ հյուսիսային և արևելյան սահմանագիծը բացահայտ չի երևում, այլ թվում է, թե այն բաժանվում է լեռների ստորոտներով, մասնավորապես Խոչքար լեռներով և Շամքորի անջրպետով, իսկ արևմուտքից եզրագծվում է Սյունյաց Աղավնու(Հագարու) գետով,որոնք պարսպում են նրա ելքը և փոխում ջրերի ընթացքը, որովհետև Սյունիքում գետերը հյուսիսից և ելքի կողմից իջնում են Գեղամա լեռներով

դեպի մեծ Երասխը, իսկ Արցախում արևմուտքից արևելք դեպի Կուր գետն են հոսում, ոռոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենաիզորը ամենահյուսիսայինն է՝ Թարթառը կամ Թերթերը, ըստ մեր նախնիների՝ Տրտուն, որը բխելով Վայոց ձոր և Զանգեզուր լեռների թիկունքից, անցնելով Խաչենի խոր ձորերով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը՝ անցնելով Պարտավ քաղաքի մոտով[1]:

Արցախ-Ուտիքը ֆիզիկա-աշխարհագրական իմաստով զբաղեցնում էր ներկայիս ԼՂՀ Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Շահումյանի, Քաշաթաղի և ազատագրված Քարվաճառի, ինչպես նաև Գետաբեկի, Թոուզի, Շամխորի, Քարհատի(Դաշքեսանի), Խանլարի ,Զաբրաիլի, Ֆիզուլու շրջանները[2]:

Հյուսիսային Արցախը՝Գարդմանքը (նաև Գարդման, Ուտիք, Հյուսիսային Արցախ)՝ որը համընկնում է Մեծ Հայքի Ուտիք նահանգի տարածքին և հանդիսանում է գարդմանահայերի կողմից կիրառվող տվյալ նահանգի անվանումը, Ադրբեջանի մեկ այլ, տարածքում մնացած Գարդմանքի հողերի ընդհանուր, առավել չկիրառվող անվանումն է: Զբաղեցնում է Սևանա լճից արևելք և Կուր գետից արևմուտք ընկած տարածքները՝ պատմական Ուտիք նահանգի Շակաշեն, Գարդմանք,Տուչկատակ, Ուտի առանձնակ, Առանռոտ, Աղուէ գավառների մեծ մասը, որը կազմում է ներկայիս Ադրբեջանի հանրապետության հյուսիս-արևմտյան շրջանները:

Գարդմանքում է գտնվում Տիգրանակերտներից մեկը, որը հիմնադրել է Տիգրան Բ Մեծը Ք.ա. 95-55թվականներին[3]:

Դաշտային կամ Հյուսիսային Արցախը աշխարհագրական շրջանն է այժմյան Ադրբեջանի տարածքում՝ Կուր գետի և Մռավի լեռնաշղթայի միջև:

Դաշտային Արցախի տարածքը համընկնում է Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Գարդմանք գավառի հետ: Քանի որ Դաշտային Արցախը գտնվում է Լեռնային Արցախից(Ղարաբաղից) հյուսիս, այն հաճախ կոչվում է նաև Հյուսիսային Արցախ:

Ըստ Ղ. Ինճիճյանի՝ բուն Գարդմանքը տեղադրվում է Շամքորի ու շրջակայքի վրա, ձգվելով դեպի արևմուտք[4]:

Վաղ միջնադարում տարածաշրջանը ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից մի քանի գավառներ, ինչպես, օրինակ՝ Կողթ, Քուստ-ի-Փառնես,Գարդման, Շակաշեն և այլն: Միջնադարում տարածքն ավելի հայտնի էր Գարդման անունով, իսկ ուշ միջնադարում կազմում էր Գանձակի (Գյանջայի) խանությունը: Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո հայտնի էր Ելիզավետպոլի նահանգ անվամբ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո երկրամասը միացվեց Ադրբեջանի Հանրապետությանը և տրոհվեց վարչական մի քանի շրջանների մեջ: Դրանք են՝ Գետաբեկի, Դաշքեսանի, Թոուզի, Խանլարի, Կասում-Իսմայիլովի (Գյուրանի), Ղազախի, Շամխորի և ներկայիս ԼՂՀ մաս կազմող, սակայն Ադրբեջանի կողմից բռնազավթված՝ Շահումյանի շրջանները:

Երկրամասն իր մեջ ներառում է Սևանի և Մռավի լեռնաշղթաներից սկիզբ առնող և աջ կողմից Կուր գետի հետ միախառնվող՝ Ասրիկ, Զակամ, Շամքոր, Արթինաջուր (Կոշկար), Գանձակ, Կուրակ և Սնջուր գետերի ջրահավաք ավազանները, ինչպես նաև՝ Ջողազ, Աղստև և Տավուշ գետերի ստորին հոսանքի շրջանները:

Հյուսիսային Արցախ կոչված երկրամաս, ըստ «Աշխարհացոյց»-ի ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից 3-ական գավառներ. Արցախից՝ Քուստ-ի-Փառնես կամ Միջնարցախ, Կողթ (ընկնում է Գեղամա ծովի ելքի Շամքոր և Խոչքար գետերի ակունքների միջև,Այրում գավառում), և Մեծ Կողմանք(Թարթառի հյուսիսային կամ ձախ կողմում է, Չլաբերդում)[5], իսկ Ուտիքից՝ Տուս-Քուստակ,Գարդման[1] (տարածվում է Շամքոր գետի վերին

---

[1]ԱլիշանՂ., Արցախ, 1993, Երևան, էջ 5:

[2]Ղարաբաղյան ազատագրական պատերազմ(ՂԱՊ), հանրագիտարան, Երևան, 2004, էջ 232:

[3]Կարապետյան Ս.,Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 227:

[4]Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822,էջ 338: Տես նաև՝ Ուլուբաբյան Բ.,Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության,(5-7-րդ դարեր),Երևան, 1981, էջ 35:

[5]Ալիշան Ղ., Արցախ,Երևան, 1993, էջ 10:

հոսանքի շրջանում) և Շակաշեն (գավառի պատմաաշխարհագրական նշանավոր վայրը Գանձակ քաղաքն է, որը կառուցվել է 12-րդ դարում)[2]:

Արտաշես Ա-ի և նրա ժամանակակցի՝ Ծոփքի թագավոր Զարեհի մասին հույն աշխարհագետ Ստրաբոնը[3] հաղորդում է, որ նրանց ժամանակներում իրենց երկրների բնակչությունը միալեզու էր, այսինքն խոսում էին միայն հայերեն: Սրանից հետևում է, որ Մեծ Հայքի հյուսիսարևելյան շրջանների, այսինքն՝ Արցախ-Ուտիքի բնակչությունը իրենց մասնակցությունն են բերել հայ ժողովրդի կազմավորման ընթացքին և դարձել նրա անքակտելի մասը: Ինչպես Արտաշեսյանների, այնպես էլ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում Արցախն ու Ուտիքը կազմում էին Մեծ Հայքի անբաժանելի մասերը: Իբրև Հայաստանը կազմող մասեր-նահանգներ՝ վերջիններս հիշատակվում են Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի, Ստեփանոս Բյուզանդացու և այլոց երկերում: Այս ու բազմաթիվ այլ հեղինակներ նշում են, որ Հայաստանի սահմանը հյուսիսարևելքում անցնում էր Կուր գետով[4]:

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև Գյուլիստանում կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Արցախը, այդ թվում Գյուլիստանի մելիքությունը և հարավային Կովկասի տարածքների մեծ մասն անցել են Ռուսաստանին: 19-րդ դ. Գյուլիստանը ներառված էր Ելիզավետպոլի նահանգի Ջվանշիր գավառի կազմում:

1867 թվականի դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր 2-րդ ցարը ստորագրեց «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխումների մասին» կանոնադրությունը, որի համաձայն Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի: Հին Գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, որի անունով էլ կոչվեց նոր նահանգը[5]: Այս նահանգի մեջ մտան Արցախը, Զանգեզուրը և հայկական այլ գավառներ:Արցախի գավառական կենտրոններ դարձան Թարթառը (Ջիվանշիրի համար) և Ջեբրայիլը (համանուն գավառի համար)[6]: Ղարաբաղը այս նահանգի կազմում մնաց մինչև 1917 թվականը:

1889 թ. դրությամբ Գանձակի նահանգում գործում էր 11 վանք և 88 եկեղեցի[7]:

Արցախ աշխարհի բազմադարյան պատմության ամենածանր ու դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջաններից մեկը, թերևս 1918-1921 թվականներն են[8]:

1918-1920թթ. Գյուլիստանը Լեռնային Ղարաբաղի այլ շրջանների թվում փաստորեն ինքնուրույն էր և կառավարվում էր տեղի Հայոց Ազգային խորհրդի կողմից[9]:

1920թ. մարտ-ապրիլին Գյուլիստանն Արցախի շրջանների հետ ենթարկվել է օսմանյան թուրքերի և մուսավաթականների հարձակումներին,[10] ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, զոհվել խաղաղ բնակիչներ:

Ադրբեջանի Հանրապետությունը ստեղծման օրվանից ոչ միայն քաղաքական նկատառումներով յուրացրել է հարևան Իրանի հյուսիսային հատվածում գտնվող Ատրպատական նահանգի անունը, այլև ի սկզբանե ձևավորվել է մեծավ մասամբ պատմական Հայաստանի հողերի վրա (Կուրի ողջ աջափնյա հատվածը):

Ստալինյան իշխանությունների որդեգրած՝ Հայաստանը Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև մասնատելով տարալուծելու

---

[1]Հեղինակներից շատերը Գարդմանը դնում են Արցախ «աշխարհի» մեջ:Տես՝ ՀակոբյանԹ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան,2007, էջ 243:

[2]Նույն տեղում, էջ 244:

[3]Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ.I ,$ 4,5 և այլն

[4]Ուլուբաբյան Բ.,Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (5-7-րդ դդ.),էջ 30-31:

[5]1918թ. սկզբին Ելիզավետպոլը վերանվանվեց Գանձակ

[6]Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ.199,ց. 1,գ.128,թ. 248:

[7]Կարապետյան Ս.,Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 227:

[8]Հարությունյան Հ.,Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ.,Երևան, 1996, էջ 8:

[9]Правда о Нагорном Карабахе, Степанакерт,1989, с. 23.

[10]Нагорный Карабах, Историческая справка, Ереван., 1988, с. 23.

ծրագիրը, ճիշտ է, ամբողջությամբ կյանքի չկոչվեց, այնուամենայնիվ պատմական Հայաստանի հայահոծ մի շարք երկրամասեր՝ Նախիջևանը, Լեռնային և Դաշտային Ղարաբաղն ու Հյուսիսային Արցախը բռնակցվեցին «եղբայրական Ադրբեջանին», իսկ Ջավախքն ու Գուգարքի մի մասը՝ Վրաստանին։Ուստի պատահական չէր, որ 1923թ.հուլիսի 7-ին կազմավորված ԼՂԻՄ-ի[1] կազմում չեն ներառվել Գյուլիստանի և Հյուսիսային Արցախի շրջանները։ Ադրբեջանի իշխանությունները Գյուլիստանի շրջանում վարել են ժողովրդագրական միատարրությունը խախտելու ակնհայտ քաղաքականություն՝ 1930 թվականին շրջանին միացրել են 4 ադրբեջանաբնակ գյուղ՝ Ջեյվա, Շեֆեկ, Գյուրզալար և Թոդան։ Այս տեսքով շրջանը պաշտոնապես կազմավորվեց 1930թ. օգոստոսի 8-ին (08.08.1930թ.), այդ ժամանակ էլ Անդրկովկասի բոլշևիկների առաջնորդ Ստեփան Շահումյանի պատվին ստանալով Շահումյանի շրջան անվանումը[2]։

Շահումյանի շրջանը, ինչպես խորհրդային ողջ տարիներին, այնպես էլ՝ նախկինում,Լեռնային Ղարաբաղի մյուս հատվածների և ամենից առաջ՝ ԼՂԻՄ-ի հետ կազմում էր մեկ միասնական պատմաաշխարհագրական էթնիկ և տնտեսական տարածություն։

Շահումյանի շրջանը 1930-1991թթ. Ադրբեջանական ԽՍՀ կազմում էր։ Նրա տարածքը կազմում էր 600 քառ.կմ, իսկ բնակչությունը 1989 թվականի դրությամբ 21 հազար էր, որից 17,5 հազարը հայեր էին, 3,5 հազարը ռուսներ ու ադրբեջանցիներ[3]։

Կենտրոնը քաղաք Շահումյանն էր։ Շրջանը ԼՂՀ հյուսիսային դարպասն է, արևմուտքում և հյուսիսում սահմանակից է Դաշքեսանի, Խանլարի, արևելքում՝ Գերանբոյի (Կասում-Իսմայիլով), հարավում՝ ԼՂՀ Մարտակերտի շրջաններին։ Տարածքի հարավային սահմանագծի երկարությամբ ձգվում է Մռավի լեռնաշղթան (ամենաբարձր գագաթը Գյամիշլեռն է՝ 3724մ)։ Հարավ-արևելյան սահմանի երկարությամբ (Մարտակերտի սահմանագծով) հոսում է Ինջա (բարակ) գետը։ Շրջանի Գյուլիստան գյուղի մոտ է գտնվում Ս. Ամենափրկիչ (Նապատ) վանքը,գյուղից 3 կմ հեռու՝ Գյուլիստանի կիսավեր բերդը (XVIIIդ.), որը եղել է Գյուլիստանի մելիքների նստավայրը,պահպանվել էին դղյակներ, բնակելի շենքերի և եկեղեցու ավերակներ։ Շահումյան քաղաքում էր գտնվում Ս. Աստվածածին եկեղեցին (XVIդ.), քաղաքից հարավ՝ Երեք մանկունք կիսավեր վանքը (XVIդ.), Բուզլուխում՝ եկեղեցի (XVIIIդ.), մոտակայքում՝ Ս. Մինաս ուխտատեղին, Հայ Պարիսում՝ ավերակ եկեղեցի և Նահատակ մատուռը, Վերինշենում՝ եկեղեցի (XVIIIդ.)[4] և այլն։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ է մեկնել 2647 շահումյանցի (այդ թվում՝ 10 կին), զոհվել է 1200-ը, իսկ մեկն էլ՝ Գարեգին Բալայանն արժանացել է Խորհրդային միության հերոսի կոչման[5]։

Ադրբեջանի հակահայկական քաղաքականության պայմաններում անգամ 1950-60-ական թվականներին շրջանում նկատվել է ազգային ինքնագիտակցության զարթոնք։ Նման տեղաշարժերն արգելակելու, հայկական շրջանները լուծարելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները ստեղծել են արտադրական տարածքային նոր խոշոր միավորներ։ Խանլարի շրջանը, որը գերակշռող հայ բնակչություն ուներ և հայ ղեկավարություն, միավորվել է ադրբեջանաբնակ Սաֆարալիևի շրջանի հետ։ Իսկ Շահումյանի շրջանը որոշվել է միացնել հարևան ադրբեջանաբնակ Կասում-Իսմայիլովի շրջանի հետ։

Այդ որոշման դեմ բազմաթիվ բողոք - հեռագրեր հանրագրեր, հատուկ պատվիրակություններ է ուղարկվել Մոսկվա և շահումյանցիների դիմադրության շնորհիվ շրջանը պահպանել է իր կարգավիճակը։

Ադրբեջանական իշխանությունները և Ղարաբաղում ադրբեջանցի գործիչները արցախահայությանը սպառնում էին ուժ գործադրել, եթե նա չկատարի Ադրբեջանի պահանջները[1]։

---

[1]Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան,1971, էջ 231։
[2]НКР, Путь к вершинам, Степанакерт, 2001,стр. 135. К истории образования Нагорно-Карабахской области Аз. ССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989, с. 54.
[3]НКР, Путь к вершинам,Степанакерт, стр. 134.
[4]ՂԱՊ, էջ 517։
[5]Նույն տեղը, էջ 518։

Անդրֆեդերացիայի ստեղծումով արհեստականորեն խլացվել էին այդ վարչական միավորի մեջ մտնող ազգերի ներքին պահանջներն ու դժգոհությունները, ծավալվել էր վերին հրամանով վարվող մի քաղաքականություն, որը ինտերնացիոնալիզմ քարոզելով միակ ճշմարտությունն էր համարում «եղբայրական Ադրբեջանի» կազմում պահելը[2]:

1987 թվականից սկսած՝ բացահայտ է դարձել հայերին բռնի տեղահանելու՝ Ադրբեջանի իշխանությունների քաղաքականությունը: Առաջին փորձը նրանք կատարել են Հյուսիսային Արցախի Չարդախլու գյուղի բնակիչների նկատմամբ[3]:

Մինչև Ղարաբաղյան հակամարտության սկիզբը Հյուսիսային Արցախի լեռնային հատվածում բնակչության մեծամասնություն են կազմել հայերը՝ շրջանի բնիկները.այնտեղ ապրել է մոտ 90-95 հազար հայ: Նրանց մոտ կեսը՝ 40 հազարը, ապրել է Կիրովաբադ (Գյանջա, պատմական Գանձակ) քաղաքում, իսկ մնացածը 10-20 հազար բնակչությամբ բնակվել է Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի և Շամքորի շրջաններում:

1988 թ. աշնանը Ադրբեջանի հայաշատ վայրերում ծայր առած բռնություններին հաջորդել են բռնագաղթը և զանգվածային փախուստը: Դատարկվել են Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի և այլ շրջանների հայկական գյուղերը:

Ադրբեջանի ղեկավարությունը՝ հանրապետության ժողովրդական ճակատի հետ միասին, մարդկանց խոշոր զանգվածներին ներքաշեց հակահիրավական գործողությունների մեջ ընդհուպ մինչև զինված հարձակումները հայկական քաղաքաների ու շրջանների վրա: 1989թ. հուլիսի 26-ին ժողովրդական պատգամավորների շրջխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ մտցնելու մասին[4]:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից ծավալված հետագա ռազմական գործողությունների հետևանքով 1989 - 1990 թվականներին հայաթափվել է Հյուսիսային Արցախի՝Գարդմանքի հայկական էթնոսի պատմական տարածքը,[5] ապա և 1992թ. հունիսի 13-14-ին՝ 1000-օրյա դիմակայումից հետո, զավթվել է Շահումյանի շրջանը:

Այդօրերին՝ 20000 հայ բնակչություն, 11 հայկական գյուղ ունեցող Շահումյանում տրվեց 289 անհայտ կորած կամ զոհված: Այդ օրը կորցրեցինք Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանըիր՝ Ներքին Շեն, Վերին Շեն, Հայ Պարիս, Մանաշիդ, Էրքեջ, Բուզլուխ, Կարաչինար, Գաղթուտ, Գյուլիստան, Խարխափուտ հայկական գյուղերով 698 քառ. կմ. տարածք:[6]

Եվ միայն մայիսյան զինադադարից հետո՝ 1994թ.հունիսին նորից ստեղծվել է Շահումյանի շրջանի վարչակազմ և սկսվել է շահումյանցիների վերաբնակեցումը ԼՂՀ-ում:

2001թվականին ԼՂՀ կազմում ստեղծվել է Շահումյանի շրջան վարչական նոր սահմաններով, որն ընդգրկում է Շահումյանի նախկին շրջանը (որի գյուղերը գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ, թվով 16 գյուղ), Գետաշենի նախկին ենթաշրջանը (թվով 7 գյուղերը հակառակորդի վերահսկողության տակ են գտնվում) և Քելբաջարի նախկին շրջանը (թվով 33 գյուղ)[7]:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նունե Սարուման - պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ավանեսյանը:

[1]Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 314:
[2]Սարուման Ն., Քաղաքական և մշակութային իրավիճակը ԼՂԻՄ-ում 1960-80-ական թվականներին, Ստեփանակերտ, 2001, էջ 8:
[3]Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, Երևան, 2000, էջ 8:
[4]Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, էջ 14:
[5]«Գարդմանի կանչ» թերթ, 2008թ. նոյեմբեր:
[6]http://sarcashen.blogspot.com/search/label/
[7]Նույն տեղում: